

դպրոցական ասպարիզում, այն ժամանակ թող նրանք ի նկատի ունենալով, որ նախկին հոգաբարձութեան և առաջնորդի մէջ զանազան տարաձայնութիւնները պատճառով մեծ վիճ է բացվել և գործերն այն դրութեան են հասել, որ մի-ասին գործերն անհնարին պիտի լինին, ընտրեն աւելի նոր, թարմ և եռանդուն ուժեր, մանաւանդ որ միշտ մի և նոյն անձինք ընտրելը մի և նոյն պաշտօնի մէջ ունի և շատ անյարմարութիւններ: Մեզ հարկաւոր են այժմ բոլորովին նոր, անշահասէր և գործին անձնուէր անձինքը:

Առաջնորդի յորդորը ոչ թէ միայն չաղից, այլ և մի քանի պարագլուխներ յայտնեցին, որ նրանք եկել են յատկապէս հին հոգաբարձութեան և սկսեցին նոյն իսկ ժողովում, առանց քաջվելու, թելադրել պատգամաւորներին գրել հին հոգաբարձութեան անունները: Պատգամաւորները մինչև այն աստիճան ենթարկվել էին այդ մի քանի անձանց ազդեցութեան, որ լսելով թէ պէտք է վերընտրել հին հոգաբարձութեան և կարծելով թէ հոգաբարձութեան մէջ քարտուղարի պաշտօնով և վարձով ծառայող ոմն Սրբէլիան Գալուսթրէլի և պէտք է ընտրել, նրա անունն ևս գրել էին թղթերի վրա և այդ տեսակ ընտրութեան արդիւնքն այն եղաւ, որ հին հոգաբարձութիւնը մինչև անգամ իր քարտուղարով վերընտրվեց: Միայն 2 հոգի նոր ընտրվեցան, որով հոգաբարձութեան թիւը դառաւ 6: Թէ այդ ընտրութիւնը որքան ապօրինի է, ես միայն առաջ կը բերեմ մի փաստ: Ինչպէս յայտնի է, թեմական դպրատնոցը կառուցական ահագին վեճեր ունի դանա-նական թուրք բեգերի և աղաների հետ, ի թիւս որոց յայտնի Գաւիթ-խան Աղալարովի հետ Գրպարանոցի շահերը պաշտպանող է հոգաբարձութիւնը, որի անդամն է այժմ վերընտրեալ պ. Ստեփան Իւլաշան, որը, որպէս հոգաբարձու, հանդիսանում է զպարանոցի կողմից իբրև պաշտպան կամ քաղաքացիական պահանջատէր (гражданский истец): Աղալարովի դէմ, այդ նոյն իւրաքանչեան, Աղալարովի փաստաբանն է, հաւատարմատարը և նրա բոլոր գործերի ընդհանուր կառավարիչը և իբրև այդպիսի նա հանդիսանում է պատասխանատու (ответчик) կամ պատասխանատու Աղալարովի պաշտպան հոգաբարձութեան դէմ, որով մի և նոյն անձն է միաժամանակ և պահանջատէր և պատասխանատու: Թողնում եմ ընթերցողներին դատել թէ որքան օրինաւոր է այդ տեսակ կացութիւնը, երբ մի փաստաբան միաժամանակ պաշտպանում է երկու հակառակորդներին դատը միմեանց դէմ...

Սակայն երբ աղմկալի ընտրութեան գործը վերջանալով, կարծում էր թէ ամեն ինչ վերջացաւ, մի նոր հարց նորից յուղմունքի և ահաղին աղմուկների պատճառ դարձաւ Հոգեւոր Իշխանութեան կարգադրութեամբ պատգամաւորները ընտրվել են հոգաբարձութեան ընտրելու միայն թեմական դպրոցի համար. այդպէս էր յայտարարված եկեղեցիներում, հրաւերներում: Սակայն երբ պէտք եղաւ ընտրութեան մասին արձանագրութիւն կայացնել, պատգամաւորները յայտնեցին, որ իրանք ընտրել են այդ 6 հոգուն իբրև հոգաբարձութեան ոչ միայն թեմական դպրոցի, այլ և եկեղեցական-ծխական օրիորդական դպրոցի համար: Առաջնորդը, հիմնվելով վեհ. կաթողիկոսի եկեղեցական-ծխական ուսումնաբանների համար հրատարակած կանոնադրութեան վրա, յայտնեց, որ օրիորդական դպրոցը պէտք է առանձին կառավարութիւն և հոգաբարձութիւն ունենայ: Ի վերջոյ մի քանի կողմնակից անձերի ջանքով կարելի եղաւ համախոհութիւն կայացնել առաջնորդի և պատգամաւորների մէջ՝ այն ձևով, որ իւրաքանչիւր կողմը առանձին արձանագրելով իր կարծիքը, խնդրի վերջնական լուծումն ենթարկել վեհապետ կաթողիկոսի վճռին:

Այսպէս վերջացան առ. այժմ այն աղմուկները, որոնցով ահա մի քանի ամիս է, ալեկոծվում է Եւլին:

Թող ենք տալիս մեզ մեր համեստ կարծիքը յայտնել: Մենք կարծում ենք, որ բարձր հոգեւոր իշխանութիւնը նախ քան ընտրութիւններ հաստատելը, աւելի լաւ կ'անէ մի խիստ և օրինաւոր քննութիւն նշանակել թէ հոգաբարձութեան և թէ կառուցական գործերի վրա, և սույն իր վճիռը հիմնէ այդ ընտրութեան վրա:

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ԽՊՐԱՊԻՆ

Ախալցխա, 23 մայիսի
Երեցփոխանական հարցը մի տեսակ չու. ուցաւ և դարձած վերջին ժամանակներս մեր աղ-դային և եկեղեցական կեանքի մէջ: Ուսումնասի-րելով երեսուն տարւոյ անցեալը, դժբաղդաբար գտնում ենք, որ երեցփոխանական գծով ին-նեքը միշտ յուղել են և յուղում են հասարակա-կան մտքերը և նոյն իսկ ազգային լրագրութեան անդորրութիւնը: Գայտնվեց արդեօք մի երեցփո-խան, որ կարողանար արդարանալ իր խղճի և հասարակական կարծիքի առաջ, իբրև անմեղ և իզուր դատապարտված: Իմ գիտեցած 3—4 ե-րեցփոխաններից և ոչ մէկը իրանց վրա բարձած կասկածները հերքելու փաստեր չը ներկայացնե-րով հասարակութեան, այժմ արհամարհանքն է եղած նոցա բաժինը և ամաչում են ճակատ առ-ճակատ հրապարակի վրա դուրս գալ և զրպար-տիչ անունը տալ նրանց, որոնք մերկացրել էին իրանց թերութիւնները և զեղծումները: Քա՛մայեց եկեղեցու երեցփոխանական հարցը ես ունի իր հետաքրքիր կողմը, բայց իմ նպատակից հեռու է Տափի-թաղի կամ Գաւուկից եկեղեցու երեցփո-խանական հարցի առիթով անել ո և է նկատու-ղութիւն. ինձ հետաքրքրում է այն գրուածքը, որ տպված էր «Մշակիդ» 56 համարում, իբրև պատասխան կամ հերքում իմ գրած նամա-կին 33 համարում, որի մի մասը վերաբերում էր մեր Ս. Փրկիչ եկեղեցու երեցփոխանի անհոգու-թիւններին:

Ձեռն ցանկանում կրկնել ինչ որ ասել եմ, այլ նպատակս է ապացուցանել թէ արդեօք իսկապէս ստուեր զգե՞լ եմ մեր երեցփոխանի անգործու-նէութեան վրա:

1) Ս. Փրկիչ եկեղեցու ներկայ երեցփոխանի հաւատարմութեան վրա առանց կասկածելու ա-սել եմ, որ չնորհիւ մեր երեցփոխանի անհոգ կառավարութեան, եկեղեցին տուժում է նիւթա-կանապէս, նոյնը և կրկնում եմ 2) Մոմախանա-նութիւն և զանազանակաղաքի արդիւնքը զգալի-կերպով նուազելու պատճառը գտնում եմ ոչ թէ ճշգրտի տնտեսական նեղ գրութեան, մէջ, այլ այն հանգամանքի մէջ, որ նախ երեցփոխանը իր սեփական մասնաւոր արհեստի զործով զբաղ-ված լինելով, անշան և սուղ միջոցը միայն կա-րող է նուիրել հասարակական պաշտօնին, և երկ-րորդ եկեղեցուց խռոված լինելու: 3) Անհոգու-թիւն չէ արդեօք, որ ժամկոչին յանձնելով իր իրաւունքը, դեռ ես չը գիտեմ թէ ժամկոչի մօտ ճանաչուած մամերը բոլորն էլ կրնան են երեց-փոխանական կնիքը: Անհոգութիւն չէ արդեօք, որ ինչպէս սովորական էր մինչև այժմ, փոխա-նակ ինքը երեցփոխանը եկեղեցում գանձանակ չըլկցնելու, և տօն օրերին անձամբ մոմ վաճա-ռելու, այդ պաշտօնը վարում է ժամկոչը. միթէ չը գիտեմ իր և ժամկոչի մէջ եղած տարբերու-թիւնը. բայց պ. երեցփոխը արգարանում է մի-այն նրանով, որ ուշանում է ժամերգութեան մի-ջոցին եկեղեցուց ոտը չը կոխելու. հաստատ է իր ուշանում. ուրեմն նա ինչպէս կարող է պաշտ-պանել այդ եկեղեցու շահերը, երբ ժամերգութիւ-նից խորշում է: Անհոգութիւն չէ արդեօք, երբ եկեղեցապատկան կրպակներից ամենից շատ ե-կամուտ բերող կրպակը զոց է այժմ, որովհետեւ վարձողի հետ պայմանագրի համաձայն չը վար-վելով, պայմանագրից ցնդեցաւ յօղս, թողնելով անապին կրպակը և դժօրը առանց եկամուտի: Անհոգութիւն չէ արդեօք, որ եկեղեցապատկան կրպակներից մեծ մասը վարձով տալով առանց նստարանի վաւերագրի, այսօր անապին ապա-ռիկներ են մնացած և չէ կարող հաւաքել ինչին վերադրել, որ անցեալ տարւոյ եկեղեցապատկան կրպակներից մին հոգեհին զոհ գնալով, հոգեւոր կառավարութիւնը իր անգամը միջոցով վերանու-րդել տուեց, և չը յանձնեց երեցփոխանին մի հարկը բուրդի ծախս անելը:

Ձեռքս սրտիս զրած խոստովանում եմ, որ մեր ներկայ երեցփոխանը խաղախոսութիւն անելու չնորհելը զուրկ է բոլորովին, նա հաւատարիմ է, նա բարի է. բայց թող է, անընդունակ է այդ պաշտօնին, անօգտակար է և մինչև անգամ վնասակար (ֆորձերը ապացուցին): Երբեքս սխալ է չստորագրողներին՝ այն ենթադրութիւնը, որ ժողո-վուրդը նեղութեան մէջ լինելով մոմ քիչ է վա-ռում. ընդհակառակն մեր հայը այն ժամանակ աւելի կ'ընտանէր է, երբ նեղութեան մէջ է լի-նում. — նա զրկում է իր անձը, ծոմ պահում,

բաղցած մնում, եկեղեցի վազում, մոմեր վա-ռում, գանձանակում փող գցում, սրտանց կպչե-լով Աստուծու «փէշին», որ նախախնամութիւնը իր աղօթքը, իր իղճը լսէ, գործին աջողութիւն տայ և կեանքին ուղղութիւն: Եթէ եկեղեցում հարկը մոմ է վառվում, նոցանից միայն կէսն է զնվում ժամկոչից, միւսներին թող հետամուտ լինի և գտնէ թէ որտեղից են գնվում և ինչ աղ-բիւրներից վառվում: Անտարբեր մնալը անհո-գութիւն չէ: Ինձ լաւ յայտնի է, որ ներկայ ե-րեցփոխի թէ ընտրողներն են սխալված և թէ ինքը երեցփոխանը, որ ընդունել է այդ պաշտ-ոնը և գուցէ նիւթապէս էլ վնասվում է: Երեցփո-խանի պաշտպանները իրանք էլ հակասում են ի-րանց պաշտպանողական գրուածքում, ասելով թէ «հասարակութիւնը խնդրեց վիճակային կոնսիստո-րիային, որ ընդգէմ է երեցփոխանութիւնը հոգե-ւոր կառավարութեան յանձնելու».

այդ խնդրը իմ գրածն է, ահա և նրա շարունակութիւնը. «այլ անյապաղ ընտրել նոր երեցփոխան և յանձ-նել նոր երեցփոխանին պաշտօնը».

այստեղ պարզվում է, որ ոչ թէ խնդրում են հին երեց-փոխանին իր պաշտօնը շարունակելու, այլ ընտ-րել նորը և յանձնել նորին պաշտօնավարութիւնը: (Գծադրաբար կայացած ժողովներում որոշեալ մարդիկների թիւը ներկայ չը լինելու պատճառով և ընտրութիւնը յետաձգվել է մինչև այժմ):

Եթէ կամենում են աւելի մանրամասն բացա-տրութիւններ լսել, թող բարհաճեն դիմել ուր հարկն է, միայն ոչ լրագրութեան, ևս պատ-րաստ եմ գտնեցել ամենքին. իսկ լրագրութեան չըլանակ չէ կարող դեռեղել մեր մասնաւոր բացատրութիւնները և մերկացումները, որոնք ա-մեն ընթերցողներին այնքան էլ հետաքրքիր չեն: Այս է իմ վերջին խօսքը:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են ԱՅԱՅԱՅԱՅԻՅ հետեւեալը: «Ապ-րիլի սկզբից մինչև այսօր իւրաքանչիւր օր տե-ղում էր անձրևը, երբեմն ընդհատվելով: Ամիս 18-ին երկինքը ամպամած էր և երբեմն որոտի ձայն էր լսվում, երբեմն էլ նկատելի էր լինում հեռուից կայծակը: Այդ միջոցին մի երեքտասարդ հեռագրատան աստիճանաւոր, Ի. Պ. ազգանունով, գնում է հեռագրի թիւը կապելու Ախալցխայից 20 վերստ հեռաւորութեամբ: Երբ թիւի երկու ծայրերը միացնելով ուղղում է ոլորել, յանկարծ մի անորոշ և թեթեւ ձայն հանելով ընկնում է և անմիջապէս մեռնում: Բժիշկները հաստատում են, որ մահը առաջացել է էլեկտրական հոսանքի հար-ւածից»:

Երեւելի մեզ գրում են: «Ամիս 20-ին նո-րակոչ հայ զինուորները Քանաքեռից կանչվեցան Երևան, ուր մեծ էին մի քանի գնդերաւ-ներ, որոնց ներկայութեամբ մեր զինուորները զօրախաղ կատարեցին: Բարձրաստիճան զինու-րական անձինք, ինչպէս երևում է, շատ գոհ մը-նացին նոր զինուորների առաջադիմութիւնից: Նոյն օրը մեր երեքտասարդ զինուորները այստե-ղից վերադարձան Քանաքեռ, ճանապարհին եր-գեր երգելով»:

Մեզ խնդրում են հրատարակել հետեւեալը: «Մի երիտասարդ Սիււմբուլ կեղծ անունով պատրաստում է և կը վերջացնի շուտով մի ինք-նուրոյն երգախառն դրամա «Գաղափարի զոհ» վերնագրով, որի մէջ դեր են խաղում մեր այժ-ման գործիչներից շատերը»:

Մեզ գրում են ՂՈՒՐԱՅԻՅ, որ մայիսի 23-ին հասան այդ քաղաք Բազու. նահանգի ժողովր-դական դպրոցների դիրէկտորը և նրա օգնակա-նը: Ամիս 24-ին նրանք այցելեցին Ղուրայի ուսուցչ երկրասեան ուսումնարանը, իսկ 25-ին հայոց ծխական երկրասեան դպրոցը: Ասում են, որ գոհ մնացին երկու դպրոցներից: Պարոնները այդտեղից վերադառնում են Բազու:

Շաքաթ օր, մայիսի 29-ին, ստացվեցաւ Թիֆ-լիսում երեք օրվայ փոստը Ռուսաստանից: Կով-կասեան սարերի ճանապարհները մաքրված են:

Տեղական ուսու լրագիրները հաղորդում են, որ Թիֆլիսի Սաղ կոչված քաղաքամասում եղած հեղեղից առաջացած վնասները հասնում են 50 հազար բուրդու գումարի Թիֆլիսի ֆրանսիական

հիւպատոսի պաշտօնակատար պ. Էշենի և քաղա-քիս ֆրանսիական կոնսիսլայի նախաձեռնութեամբ հանդանակութիւն սկսվեցաւ յօդուտ հեղեղից վը-նաւաճանների:

«Новое Обозрение» լրագիրը լսել է որ տիկին Նիկիֆորովայի գործը, որը մեղադրվում է օֆիցեր Պէկարսկուն սպանելու համար, կը նշանակվի առաջիկայ յունիս ամսի առաջին կէսում:

«Кавказ» լրագիրը հաղորդում է, որ Շուշու գաւառում յայտնվեցաւ թիֆ ծառի մի առան-ձին հիւանդութիւն, որը բաւական տարածված է գաւառի այլ և այլ մասերում և որը հայերն ժողովրդական լեզուով կրում է «չաղգա» կամ «սուլա» անունը: Տերմները չորանում են և վայր են ընկնում ծառերից:

Տեղական լրագիրները հաղորդում են, որ մայի-սի 27-ին Թիֆլիսի մի հայ մասվաճառ, Մէր-նեանց ազգանունով, անձնապաշտութիւն գործեց, Կուր գետը նետվելով վէրայի կամուրջից: Գիտի՞ր գտնվեցաւ Կուր գետի ափում:

Այս օրերս ստացանք գերմանացի ֆոն-Ֆօրկըն-բէկ ուսումնականից, Ալբրեքտ քաղաքից, մի հրաւէր՝ ուղարկել այդ քաղաքում հիմնված լրագրական թանգարանը աշխարհիս երեսին ամեն տեսակ և ամեն լեզուով հրատարակվող լրագիրներ: Լրա-գրական թանգարանը (Zeitungs-Museum) հիմնված է Ալբրեքտ պ. ֆոն-Ֆօրկընբէկի ջանքերով, և ար-դէն ունի ամեն տեսակ երկրների և ամեն լե-զուներով հրատարակվող լրագիրների համարները: Լրագրական մուզէումի առանձին բաժինը յատ-կացրած է այն բոլոր լրագրական յօդուածներին, որոնք վերաբերվում են Հօհենցոլերն գերմանական կայսերական տոհմի անդամներին: Մենք անմի-ջապէս ուղարկեցինք պ. Ֆօրկընբէկին «Մշակի» մի քանի համարներ, այն է՝ մեր լրագրի ամե-նաառաջին համարը 1872 թվ. այնուհետեւ այն տարիների առաջին համարները, երբ «Մշակը» սկսեց հրատարակվել շաբաթը երկու անգամ և շաբաթը հինգ անգամ, վերջապէս այդ վերջին տարիների և ներկայ թիւի մի քանի համարները, ի միջի այլոց և այն համարները, որոնց մէջ կան Վիլհելմ կայսրի և Ֆրիդրիխ կայսրի մասին ա-ռաջնորդողներ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ շուտով կը սկսի լոյս տեսնել Մովսիսյան, խըմ-բաղրութեամբ պ. Պետրովի մի գիւղատնտեսական հրատարակութիւն (ամիսը երկու անգամ), որը կը կրէ «Вѣстникъ русскаго сельскаго хозяйства» վերնագիրը և կարծեսայ տարեկան 4 բոբ-լի, առանց փոստի ծախսի:

Ինչպէս հաղորդում է «Արձագանք» շաբաթա-թիւթը, Թիֆլիսում կազմվել է մի քանի երիտա-սարդներից բաղկացած մասնաժողովը՝ հանգու-ցեալ Բաֆֆիի գերեզմանի վրա մի արձան կանգ-նեցնելու գործը աջողեցնելու համար:

Կիրակի, մայիսի 29-ին կայացաւ Թիֆլիսի Դումայի դահլիճում հայոց Բարեգործական ընկե-րութեան տարեկան ընդհանուր ժողովը: Ժողո-վուրդը շատ քիչ կար. ընտրվեցան հաշտեսաներ վարչութեան գործունէութիւնը վերաքննելու հա-մար:

«Новости» լրագրի № 138-ի մէջ (մայիսի 20-ից) տպվեցաւ մի շատ համակրական և ոգևորված յօդուած հանդուցեալ Բաֆֆիի մասին, որի մէջ նկարագրվում է և հանդուցեալի թաղման հան-դէսը: Թողածը կրում է «Армянскій писателъ Раффи» վերնագիրը և ստորագրութեան նայելով պէտք է ենթադրել, որ յօդուածի հեղինակը պատ-կանում է կանանց սեւերին:

Երէկ վախճանվեցաւ Թիֆլիսի փոստային չըջա-նի նախկին կառավարիչ՝ Ստեփան Դաւիթովի Բեդիրգանով, 73 տարեկան հասակում:

Մայիսի 26-ին կայացաւ Ներսիսեան դպրոցի վեցերորդ վերջնական դաստան հայոց գրակա-նութեան հարցաքննութիւնը: Որքան մենք տեղե-կացանք, դպրոցում այդ առարկայի ծրագիրը կազմված է բաւական յարմար կերպով: Բայց թէ ինչու այս տարւոյ դասընթացը ամփոփում էր

գրականութեան մի ամենաշնչին և համեմատաբար անշնչան մասը, բոլորովին անհասկանալի է. դասընթացի բովանդակութեան կէտից աւելին վերաբերում է ձեռագիրներին, իսկ միւս չնչին մասը, որքան երեւոյց տրուող հարցերից, վերաբերում է գրականութեան երեք շրջաններին, բայց թէ այդ շրջաններում ովքեր են գործել, ինչ են գրել նրանք, ինչ մտքերով են տողորված եղել, այդ մասին համարեա թէ ոչինչ չը լսեցինք: Այդպէս գրականութեան պատմութիւն անցնելով վերջերս դասաւանդում միտք չունի, մանաւանդ որ այդ դասաւանդումը վերջնականն է և այդպէս անցնելով գրականութիւնը, աշակերտները ոչ մի ամփոփ դադարաւոր և տեղեկութիւն չեն կարող դուրս բերել ուսումնաւարանից այդ առարկայի մասին:

Խօսքովի գործը հասել է իր վախճանին. դասաւանդական ընտելութիւնը չաքաւժ օր վերջացաւ և այնուհետև կողմերը սկսեցին փոխադարձաբար իրանց մտքերը յայտնել: Շաքաւթ օր, երեկոյան, խօսում էր պրօֆէսորը, միւս օր, առաւօտեան, քաղաքացիական դատի պաշտպանն էր խօսում, իսկ երեկոյան մեղադրեալի պաշտպանը, որ վերջացրեց իր ճառը միւս օրը, երկուշաբթի առաւօտեան: Այնուհետև կողմերը նորից երկրորդ անգամ մտքերը փոխանակեցին, որից յետոյ խօսք տրվեցաւ մեղադրեալին: Բայց նա հրաժարվեց խօսելուց, յայտնելով, որ նա միանգամայն այդ աւելորդ է համարում, քանի որ նա յոյս ունի, որ դատաւորները կը վերաբերվին դէպի նրան այն անապառուկեամբ, որով այս տասնեակում օրը վերաբերում էին: Ժամը 3 և 15 րոպէին գործը յայտնվեցաւ վերջացած, և դատաւորները հեռացան խորհրդակցելու համար: Անկասկած երկուշաբթի գուրս կը բերեն վճիռը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱՅԻ ԴԻՐԲԸ ԵՒՐՈՊԱՑՈՒՄ

Այն րօպէից, երբ Խալիլիան գերադասելով գերմանական բարեկամութիւնը ֆրանսիական բարեկամութիւնից, միացաւ միջին եւրօպական պետութիւնների խաղաղութեան լիգային, այդ երկիրը ստիպվեց անդադրել զինատրվելու, երկիրը կրելով ֆրանսիայի հետ ընդհարմելու: Այժմ Խալիլիան ահադին նիւթական միջոցներ է գործ դնում զինատրվելու և երկիրը, մանաւանդ երկրի ափերը ամրացնելու վրա, վերջապէս և իր նաւատորմը ուժեղացնելու վրա: Ընդհարումը ֆրանսիայի հետ այն աստիճան հաւանականութիւն է ստանում, որ Խալիլիան իր ամբողջ ուշադրութիւնը սկսել է այժմ դարձնել երկրի ափերը և նաւահանգիստները ամրացնելու վրա, երկիրը կրելով ֆրանսիայի յանկարծակի յարձակումից: Խալիլիայում շատ լաւ գիտեն որ ֆրանսիական նաւատորմը կարող է եւրօպական առաջնակարգ նաւատորմներից համարվել, ուրեմն երկիրը պէտք է լուրջ կերպով մտածէ ափերի պաշտպանութեան մասին: Խալիլիան նաւատորմը, համեմատելով ֆրանսիական նաւատորմի հետ, շատ թոյլ է, իսկ յոյս դնել սլաւոնադովի դէպքում միմիայն Անգլիայի նաւատորմի պաշտպանութեան վրա՝ անհնարին է, քանի որ անգլիական նաւատորմը թէև շատ և շատ ուժեղ է, սակայն Անգլիան, պատկանելով մանսպալէ միջին եւրօպական պետութիւնների խաղաղութեան լիգային, պատերազմի դէպքում ստիպված կը լինի պաշտպանել իր երկրի ափերը դրան յարձակումներից և հազիւ թէ այնքան ոյժ կունենայ որ համ իրան պաշտպանի, համ էլ իր դպչնակից Խալիլիան:

Եւ ահա այժմ Խալիլիան, իր ազդային ժողովի վճռով, ահադին նոր ծախսեր պիտի անէ իր ափերը ամրացնելու համար:

Խալիլիան գնահատել է Գերմանիայի բարեկամութիւնը ոչ թէ այն պատճառով, ի հարկէ, որ ձգտում է միմիայն խաղաղութեան քաղաքականութեան, այլ զի Խալիլիան այն պատճառով, որ յոյս ունի Գերմանիայի, Աստորիայի և Անգլիայի հետ կապված դաշնադրութեան օգնութեամբ ժամանակով ձեռք բերել Սափոյա և Նիցցա գաւառները, որպէս զի հասնի իր վերջնական ցանկալի նպատակին՝ Խալիլիան բոլոր երկիրներին կատարեալ միութեան իրադրութիւնը:

Խալիլիան պետական մարդիկ, ի հարկէ, շատ

լաւ են հասկանում, որ Խալիլիան անդոր է մենա-մարտելու Աստորիայի կամ Ֆրանսիայի դէմ, առաջինի դէմ՝ Տրիէստ և Տրիէստ իրան վերադարձնելու, իսկ երկրորդի դէմ՝ Նիցցա և Սափոյա ձեռք բերելու նպատակով: Սակայն Ֆրանսիայի դէմ թշնամական դիրք բռնելով Խալիլիան յոյս ունի Աստորիայի, Գերմանիայի և Անգլիայի օգնութեամբ նախ ձեռք բերելու այն երկու երկիրները, որոնք Ֆրանսիայի ձեռքումն են, հաւատացնելով Աստորիային որ ինքն այլ ևս ոչինչ պահանջներ չունի Աստորիայից, և կատարելապէս հրաժարվել է Տրիէստ և Տրիէստ նուաճելու ու առաջնակարգ հայրենիքին միացնելու ցանկութիւնից: Այնու ամենայնիւ այդ հրաժարվել ժամանակաւոր է միայն: Ֆրանսիայի հետ իր հաշիւները Աստորիայի օգնութեամբ վերջացնելուց յետոյ, Խալիլիան այնքան միամիտ է, որ յոյս ունի ապագայում դեռ Աստորիայի հետ էլ իր հաշիւները ըսկսելու:

Այդ երկրորդ դիրքը, որ բռնում է այժմ Խալիլիան քաղաքականութիւնը իր բոլոր հարկաններին վերաբերմամբ, ի հարկէ, պէտք է ծնեցնի Ֆրանսիայի կասկածներն ու թերահաւատութիւնը:

Եւ ահա Ֆրանսիայի ու Խալիլիայի քաղաքական փոխադարձ յարաբերութիւնները օրից օր վատանում են, աւելի ու աւելի են լարվում: Բայց անկասկած է, որ եթէ Ֆրանսիան պատերազմի իր մտնելով Խալիլիայի հետ, այդ պատերազմից յաղթող կը դուրս գայ, Խալիլիայի կարող է շատ թանգ նստել Ֆրանսիայի դէմ բռնած իր թշնամական դիրքը և իր ապերախտութիւնը դէպի այն ազգը, որը առաջինն է եղել որ օգնել է նրան օտար լուծից ազատվելու և միութեան գործին ձգտելու: Եթէ Ֆրանսիան յաղթէ Խալիլիային, նա կը հաստատէ իր վերջնական տիրապետութիւնը Միջերկրական ծովի վրա, խելով Խալիլիայից նրա ունեցած ազդեցութիւնը այդ ծովի վրա և դարձնելով Միջերկրական ծովը Վերմանիական լճակ: Ոչ Աստորիան, ոչ Գերմանիան ու նրանց երկուսի նաւատորմները չեն կարող ահալի լինել Խալիլիայի համար, այն ինչ ֆրանսիական նաւատորմը կարող է զրկել Խալիլիային ծովային պետութիւն լինելու որ և է նշանակութիւնից:

Խալիլիային աւելի ձեռնառու կը լինէր միշտ բարեկամութիւն պահպանել Ֆրանսիայի հետ, քան թէ որ և է ուրիշ պետութեան հետ անհաստատ, ժամանակակից և կասկածաբար բարեկամական կապերին ձգտելու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Սպանիական միմիայն Մօրէա յայտնել է որ Սպանիայի բիւրոքրատի միջոց չէ տալիս երկրին պաշտօնապէս մասնակցելու ֆարիդի աշխարհահանդիսում, բայց կառավարութիւնը կը նպաստէ մասնաւոր նախաձեռնութեանը այդ գործում:

— Ֆրիդրիխ կայսրը, տեղափոխվելով Շարլօտենբուրգից դէպի Պոտսդամ, լաւ անցկացրեց առաջին դիւերը, բայց փոքր ինչ յոգնած է ճանապարհից:

— Մայիսի 26-ին կայացաւ պրուսական լանդտագի նիստը, նոր ընտրված պատգամաւորների ընտրութեան ճշդութիւնը վերաքննելու համար: Նիստը շատ աղմկալի էր, խօսեցին պահպանողական կուսակցութեան դէմ Ռիկերտ և Ռիկերտ առաջադիմականները: Դիւերից և Պրուսիայի (միմիայնի եղբայրը) պատգամաւորների ընտրութիւնը լանդտագը անվաւեր ճանաչեց: Նիստը այնքան հետաքրքիր է, որ մենք դիտարկութիւն ունենք հետեւեալ համարում ծանօթացնել մեր ընթերցողներին այդ նիստի հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ներկայումս գերմանական մայրաքաղաքում, Բերլինում, հրատարակվում են ընդամենը 621 լրագիրներ, ամսագիրներ և շաբաթաթերթեր: Այդ թիւից 54 պաշտօնական հրատարակութիւններ են, 70 քաղաքական թերթեր են, ամեն տեսակ ուղղութեան, 165 ուսումնական և գեղարվեստական հրատարակութիւններ են (մեծ մասամբ ամսագիրներ և շաբաթաթերթեր), 217 հատ թերթեր, որոնցից ամեն մէկը նուիրված է յատկապէս մի յայտնի տրիեստի շահերի պաշտպանութեան: Այդ հրատարակութիւնների շարքում արհեստ չը կայ, որ չունենար իր օրգանը: Այնուհետև 30 հատ լրագիր միմիայն

կրօնական բովանդակութիւն ունեն, իսկ մի քանի հատ շաբաթաթերթեր միմիայն ընտանեկան ընթերցանութեան են ծառայում: Վերջապէս Բերլինում լոյս տեսնող լրագիրների թիւում 10 հատ հրատարակվում են օտար լեզուներով:

— Մի գերմանական օֆիցէր նկատում է, որ նորակող զինուորներից մին փրշտում է զօրախաղի ժամանակ:

— Չի լինի, որ փրշտալը ուրիշ անգամի թողնես ու իմ զօրախաղը չը փչացնես փրշտալով... կարծեմ, որ 21 տարվայ ընթացքում բաւական աղաւթ ժամանակ ունիք փրշտալու...:

— Մի գերմանական լրագիր ծաղրում է ամերիկացիները բարձր ու վարքը, յօրինելով մի երեւակայական ամերիկացու կենսագրութիւնը, որը ոչնչից իր թէ միլիոնատէր է դարձել: Երեւակայական հերոսը, զօկուր Ֆոպպեր, ինքն է պատմում իր կենսագրութիւնը: Հիմ ծնողներս ինձ չէին ճանաչում, մի քանի օրվայ ընթացք հասակումս բարի մարդիկ ինձ փողոցում գտան, տարան ուստիկանատուն, իսկ այնտեղից ինձ դեռեցնեցին որբանոցի մէջ: Երբ այդտեղ մի քանի տարի մնալուց յետոյ ես այնքան հասակ առայ, որ դեռ չէի կարող ինձ իմ աշխատանքով կերակրել, ինձ հասկացրին, որ այսուհետ ես ինքս իմ մասին պէտք է հոգանի իմ ամբողջ կարողութիւնս բաղկացած էր իմ երկու ոտներից, որոնց վրա և կանգնած էի ես այժմ: Այդ պատճառով ես շատ ուրախացայ, երբ մի պարոն վերցրեց ինձ իր առեւտրական տան մէջ, որպէս գործակալատար: Այդ մարդու ամբողջ առեւտրը նրանումն էր բաղկանում, որ նա ծախում էր իր հնարած դեղքը, որի միջոցով սպիտակած մազերը կրկին իրանց առաջնայ գոյնն էին ստանում: Նա ամենքին, ում որ իր դեղք չէր օգնում, խոստանում էր վճարել 1,000 դոլար, և սպիտակ մազեր ունեցող ամերիկի համբերութեամբ սպասում էին, որ իրանց մազերը սևանան, առանց պահանջելու խոստացած վարձատրութիւնը: Իմ տէրս իր կենսագրում ուրիշ ոչինչ չէր սովորել, բայց փառաւոր յայտարարութիւնների տպելը. նա այնքան տոգէ էր, որ հազիւ կարող էր դիմ ու կարգալր բայց իր դեղով ու բէկամներով ահապին փողեր իր աշխատանքում: Այդ հանգամանքը ինձ քաջալուրեց և ես ինձ ասեցի. «Այդ մարդը իր կենսագրում ոչինչ չէ սովորել, կատարելապէս անուս, տոգէ մարդ է, բայց այնու ամենայնիւ հարստացել է. իսկ ես նրանից քիչ բան գիտեմ, նրանից էլ աւելի կարող եմ հարուստ դառնալ»: Այնպէս պէտք էս ձեռնառնեմ եղայ մի որ և է համալրաբարայն անսկալական միջոց հնարելու և հինգ րօպէում հնարեցի մի միջոց: Ես վերցրի մի ապակեայ սրուակ, մէջը ջուր ամեցի, խառնեցի ջրի մէջ սրուակ և պղպեղ, — ահա միջոց պատրաստ էր. նա յատկութիւն ունէր քաջալ զինների վրա մազերը բուսցնելու: Ես անմիջապէս ձեռք բերեցի շատ ջուր և փողը ինչ փող յայտարարութիւններին համար և սկսեցի փողերի սրուակներս ծախել: Հետեւեալ օրն արդէն իմ կենսագրում մազ ընկել էր քաջալ զինների, որ խանութումս մազ զցնելու տեղ չը կար ինչ թէ և մազեր բուսցնելու դեղս ոչորքին մազի չափ չէր օգնում, այնու ամենայնիւ իմ փրկարար ջուրը ահադին քանակութեամբ առնվում էր: Բոլոր յիմարները իմ առնողներ դարձան և ես համովիցայ, որ իմ քաջալները շատ բաղաւաղ կը լինէին, եթէ իրանց զինի վրա այնքան մազ ունենային, որքան յիմարներ կան աշխարհիս երեսին: Զապէս անցաւ մի քանի ամիս, — ես արդէն հարուստ մարդ կարող էի համարվել: Տեսնելով որքան աղող է գնում առեւտրում, ես սկսեցի նոյն հրաշալի ջուրը ծախել թէ որպէս միջոց կաշու վրա երկացող բծերի դէմ և թէ որպէս միջոց զլիւսացալի դէմ: Ես ահա ես սկսեցի աւելի և աւելի բարձրանալ այն սանդղակում, որը տանում է դէպի միլիոնները: Այդ բարձր սանդղակում հաստատ քայլերով բարձրանալու համար հարկաւոր է միայն մի բան՝ այն է, որ զլուրը երբեք չը շարժի: Ես ես այդ փորձով իմացայ ու մի քանի տարիներից յետոյ միլիոնատէր դարձայ: Կենցեղի փորձը ինձ ցոյց տուեց, որ քաջալ զլիւի վրա մազերը բուսցնելը նոյնքան դժուար է, որքան յիմարներից խելաքներ դարձնելը:

— Մի գերմանական օֆիցէր նկատում է, որ նորակող զինուորներից մին փրշտում է զօրախաղի ժամանակ:

ՄՇԱԿԻ ՀՅՈՍԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՈՒՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մայիսի Ներկ խորհովի դաստատանական պալատի բաժանմունքը դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ ըսկսեց անցնել տարվայ օրոտներին 8-ին պատահած անկարգութիւնների գործի ընտելութիւնը:

ԲԻԻԻՍԵԼ, 28 մայիսի Պրինց Վիկտորի և նրա հօր խորհով Բօնապարտի մէջ համաձայնութիւն կայացաւ: Երկու իշխաններն ևս կերթան Մէն-հօլերին, նախկին կայսրուհու մօտ և այնտեղ կը կազմակերպեն բօնապարտեան երկու բաժինների միութիւնը, որոնց կառավարումը յանձն կառնէ պրինց Վիկտոր:

ՎԻԵՆՆԱ, 28 մայիսի Ընդհանուր կայսերական լիւրդժէտի համաձայն մտադրութիւն կայ 13 մի-

լիօն գուրդէն ծախսել մագաղանային հրացաններ առնելու վրա:

ԲԵՐԼԻՆ, 28 մայիսի Ներքին գործերի մինիստր Պուտկամեր հրաժարականի խնդրը ներկայացրեց:

ՎԻԵՆՆԱ, 28 մայիսի Ունգարական ընդդիմադրական մամուլը շարունակում է իր բարկութիւնը թափել Տիսայի վրա և սաստիկ յարձակվել նրա վրա նրա նորերս արտասանած ճառի համար: Ընդհակառակն, ունգարական կառավարութեան վարմունքը Բերլինում մեծ հաւանութիւն գտաւ: Այդ մտքով այստեղ յայտարարութիւններ են ստացված զիւլյօմատիական ճանապարհով և վախենում են, որ ընդդիմադրականները խիստ թշնամական ճառախօսութիւններ կանեն Ռուսաստանի դէմ: Դիւլյօմատիական շըրջաններում ասում են, որ կոմս Կալուսկիի բացատրութիւնները կարող կը լինեն չէզոքացնել արտասանմանում ընդդիմադրականների վարմունքի տպաւորութիւնը և յայտնի կը կացուցանեն աւստրո-ունգարական կառավարութեան խաղաղա-սիրութիւնը:

ԲԵՐԼԻՆ, 28 մայիսի Կայսրը ընդունեց ներքին գործերի մինիստր Պուտկամերի հրաժարականի խնդիրը և չնորհեց նրան Հօհենցօլերնեան Մեծ խաչի շքանշանը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մայիսի Հինգշաբթի Մօսկվայից վերադարձաւ ու. սինօդի օրէր-պրօկուրօրը: Հիւանդ կնոջը հիւանդանոցում շընդունելու համար Արխանգելեան նահանգը աքսորի դատապարտված բժշկապետ Կրէյպիշեւի գործի պատճառով սկնատը որոշեց, երգուհաների վճիռը օրինական համարելով: Պետերբուրգի նահանգա-կան դատարանի վճիռը՝ Կրէյպիշեւին պատժելու վերաբերմամբ, քրէական դատաւարութեան կա-նօնադրութեան 797 և 827 յօդուանները խախտելու պատճառով ոչնչացնել, և նոր վճիռ կա-յացնելու համար գործը յանձնել նոյն դատարա-նի մի այլ բաժանմունքին, իսկ վերոյիշեալ գործը քննող դատարանին դատ. կանօն. 265 յօդ-ւածի հիման վրա նկատողութիւն անել այն բանի համար, որ նա մեղադրեալների փետրվարի 8-ին տուած վճռալինջ զանգամները ներկայացրել է սկնատին միայն մարտի 11-ին. «Журнал Министерства путей сообщения» ամսագրի խօսքե-րով, Ուսման ֆաստօվեան ճանապարհի հետ միացնելու հարցը մի կողմից, Կազառիկի հետ միւս կողմից, իսկ երրորդ կողմից հարաւ արե-մտեան երկաթուղիների վապնարկա կայարանի հետ վճռված է և դեռ ներկայ տարում մտա-դրութիւն կայ սկսել այդ ճանապարհների կա-ռուցումը: Պետերբուրգի բօրայում Թիֆլիսի և Գուրիայի կառավարական բանկերի գրուական թղթերը ծախվում են 98 րուբլով: Թիֆլիսի քա-ղաքային կրէդիտական ընկերութեան թղթերը — 82 րուբլի:

ՎԻԵՆՆԱ, 28 մայիսի «Neue Freie Presse» լրագրին Սօֆիայից հաղորդում են, որ արժանա-հաւատ աղբիւրներից ստացված տեղեկութիւննե-րի հիման վրա, անպատճառ հրաժարական տա-լու է մինիստրութեան կամ պահպանողական և կամ ազատամիտ բաժինը: «Общество» լրագիրը ասում է. «Եթէ Ֆերդինանդ իշխանը չը հաս-տատէ Պոսոլի գործին վերաբերեալ վճիռը, այն ժամանակ նա ստիպված կը լինի որոնել իր համար ուրիշ խորհրդատուներ, որովհետև Ստամ-բուլով երբեք չէ թոյլ տուել և չի թոյլ տայ, որ իրան խաղաղութեան պէս խաղաղութեան Ստամբու-լովի հրաժարականի պատճառով հրաժարական կը տան 25 բարձրաստիճան օֆիցէրներ. Ժողովը-դական ներկայացուցիչների մեծամասնութիւնը այն ժամանակ կը սկսի կասկածով և ատելու-թեամբ վերաբերվել պրինց Ֆերդինանդին և պրին-ցի այժմեան արդէն տատանվող դրութիւնը աւելի ևս անհաստատ կը լինի, որի պատճառով գործերը նորից վտանգաւոր դրութիւն կը տանան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիսի «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ զէմստովօ պօլիցիայի վերանորոգութեան նախագծերը Բալտեան նա-հանգներում աննշան փոփոխութիւններով հաս-տատված են պետական խորհրդում. Ժառանգական կառավարների վրա եղած պօլիցիան ջնջված է, բայց կառավարներին տրված է պօլիցիական իշխանութեան մի մասը՝ վերանորոգութիւնների մտցնելը յուլիսի 1-ից երեկ վաղ չի կայանայ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիսի Բացի համարեա 98 միլ- նախաձեռնային գումարեց և 21 միլիոն գուրդէն արտակարգ կրէդիտից զինուորական վարչութեան

ժախսերի համար, կրկին 47 միլիոնի առանձին և արտակարգ կրեդիտ է պահանջվում պատերազմական նախադրույթներին անելու ժախսերի համար, որի թիվում համարեն 30 միլիոն ժախսական է անյետաձգելի ձեռնարկությունների վրա, որից 16 միլիոն արդեն ծախսված է: Այդ ձեռք առած միջոցների շարժառիթը պատերազմական ոյժերը մեծացնելու անհրաժեշտությունն է համարվում, որովհետև պատերազմական ոյժերի մեծացնելը խաղաղության ամենահաստատ հրահանգն է: Այդ մտքով խօսեցին առաջին պատգամաւորների ժողովը բանալու ժամանակ: Ժողովի նախագահները ասում են, որ դահական ձեռք հաշտ բնույթով խաղաղ կանցնէ:

ՊԵՏ, 29 մայիսի Դէլէգացիաների նախագահների խօսքերին Ֆրանց Թոմսէի կայսրը պատասխանեց հետեւեալ ձառով: «Այն մի քանի ամիսների ընթացքում, այն ժամանակից յետոյ, երբ ես տեսայ ձեզ իմ շուրջը հաւաքված, քաղաքական դրութեան մէջ էական ոչինչ փոփոխութիւն չէ եղել: Իմ երկարամեայ բարեկամ և դաշնակից Վիլհելմ կայսրի մահը խորին կերպով տխրեցրեց ինձ. ես հանգստանում եմ, մտածելով որ ինձ Ֆրիդրիխ կայսրի հետ միացնող ոչ պակաս սերտ յարաբերութիւնները կատարելապէս համապատասխանում են երկու հարեան պետութիւնների մէջ եղած բարեկամութեան և խաղաղութեան կապերին: Իմ պետութեան յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ շարունակում են բարեկամական բնույթով լինել: Կանգնում եմ Եւրոպայի առաջնայ պէս վայելում է խաղաղութեան բարիքները: Եթէ, չը նայելով այդ բոլորին, իմ կառավարութեան մեր սահմանները պահպանելու և մեր պատերազմական ոյժերը զօրեղանելու նպատակով, հարկադրված է նշանաւոր կրեդիտ պահանջել, դրա զիջումը պատճառը Եւրոպայի քաղաքական դրութեան շարունակվող անապահովութիւնն է և պատերազմական ոյժերի և պատրաստութեան զօրեղացումը բոլոր միւս պետութիւններում: Աւստրո-Ունգարիան նոյնպէս ցանկանալով հաւասար ոյժերով և աւանդական ազգայնութեամբ պաշտպանել իր շահերը և ընդհանուր խաղաղութեան շահերը, դրանով դիմում է բարձր նպատակի, և եթէ Աստուծուն հաճելի կը լինի, սրանից յետոյ իրան և կաշտովի վտանգի առաջն առնել, եթէ նրանք կը սպառնան ի նկատի առնել:

Լույս ալ պայմանները, իմ զինուորական վարչութեան պարտաւորութիւնն է յետ չը մնալ ուրիշներին մեր զինուորական դրութեան և մեր պատերազմական պատրաստութեան կատարելագործման և զարգացման գործում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 27-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	115	—	—
Համբուրգի վրա 100 մարկ	56	>	40
Փարիզի վրա 100 ֆրանկ	45	>	25
Ռուկի	9	>	20
Մարսայի կուպոններ	184	>	50
Արծաթ	1	>	39
Բորսայի դիսկոնտներ	6 1/8%	7 1/8%	>
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	>	25
— 2-րդ	98	>	25
— 3-րդ	98	>	25
— 4-րդ	98	>	25
— 5-րդ	98	>	25
— 6-րդ	—	>	—
Նոր 4% փոխառութիւն	82	>	37
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ.	100	>	—
— 2-րդ	99	>	—
— 3-րդ	99	>	—
Ներքին 5% առաջին փոխառութիւն	274	>	—
— 2-րդ	244	>	25
5 1/2% բէնտա	103	>	—
Ռուկայ բէնտա	198	>	—
Եթեբուրդ կոնսոլիդաց. փոխառութիւն	167	>	—
Նոր երկաթուղային բէնտա	99	>	—
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	169	>	—
Գրաւ. թղթ. Ալքու. բանկի	97	>	75
5 1/2% գրաւական թղթեր խերսոնի կալուած. բանկի	99	>	—
6% գրաւակ. թղթ. խարկովի կալ. բան.	101	>	25
— Պոլսական	100	>	—
— Պետ. ծախս	101	>	—
— Կիւսի	100	>	50
— Մոսկովայի	101	>	75
— Բեսարաբ. ծախս	100	>	50
— Նիժ. Սամար.	101	>	—
— Վիլնյայի	101	>	—
— Թիֆլիսի	27 և 43 տ.	>	—
— Բուխարայի	18 և 43 տ.	>	—
Վ. Օրժոնկ-Կամսկի բանկի ակցիաները 694	—	>	—
Ռուսաց երկաթուղային զիջում. ընկ.	273	>	—
Բիւրնակ-Վ. Օրժոնկ. ընկ.	82	>	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդն. զանգան	94	>	50
Մոսկովայի քաղաք. օրդնայիններ	94	>	62
Օրդնայի	94	>	62
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օ.	—	>	—
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը հանդարտ է:	—	>	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, յունիսի 9-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենավը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյը: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլուի տան, Նարբէժէնայա, և Թիֆլիսում Նախկին Արժուէի դալիւրէում, № 103.

2—4

ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՐՈՒՆՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄԻԳԱՅԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ԶԻՐԻՒ
Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ
ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Ցերեզնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գետնովում է Լօբկօ և ընկ. տպարանը):

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՔՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԻ մի ՊՐՈՎԻԺՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեռք մեքենաներ, նոյնպէս և ԶԻՎԻՆԻ հաշակաւոր ՖԻԼՏՐԻ, որը միակ է, որ աշոգութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Դնորհով այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի դէտէրեան, մրգային և գաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՈՒՅԿԱԿԱՆ ԶԻՐԵՐ, ինչպէս օրինակ՝ Վիշիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակել իրանց մէջ անխաթմա զաղերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախտի զոռնեղ խմելու համար և աւելի շուտ ներդրուելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործը ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածայնութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածող երկն պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի ու նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 21—50 (Ե)

ԴԵՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԵՐԵԼԻ
Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Միջի-Փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ՝ Երեւանեան հրապարակից), Նարմանովի տանը ԲԱՅԳԱԾ ԵՒ ԵՐԵՐՈՐԴ ՊԱՀԵՍՏ ԿԵՐՈՍԻՆԸ ՄԱՍ ՄԱՍ ԾԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերօսինը տարբերվում է իր յատկութեամբ Թիֆլիսում մաս մաս ծախվող կերօսինից: Նա հոտ չունի և կատարելապէս անվտանգ է:

ԳՆԵՐԸ ՉԱՓԱՌՈՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄՍ ԲԱԳՈՒՎԱԶԱՌՈՅԻ ԳՆԵՐԻՆ:

Ծառաների կողմից խաբէրայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ դալիս է կերօսին առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ «E. A. Цатуровъ. Керосинъ» գրութեամբ:

Առաջին պահանջը. ՎՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՑ, Պալլոսկու բժշկարանի կողմից: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերօսին ստանալ առանձին զըրջով և վճարել ամէն ամիս:

17—25 (Ե. Ե.)

Въ редакція газеты „МШАКЪ“ продаются съѣдущія брошюры: 1) „Экономич. Положение Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшаке“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մասները փոխուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

Ծախվում է դեղատոմսերի և դրօզմաների մօտ Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և Կայսրութեան բոլոր քաղաքներում: ԳԼՄԱՌՈՐ ՊԱՀԵՍՏ գտնվում է ՎԱՐՍԱՎԱՑՈՒՄ, հնարողի, դեղատան տիրոջ, ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐԳԻՆՍԿԻՈՒ մօտ, Էլէկտրալիսայ փողոց, № 39. Գալմանիկի մեծ արկղը արժէ վարչապալայում 50 կո, փոքրը 30 կոպ:

ՊԵՏ ԵՒ ԶԳՈՒՇԱՆԱԿ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու գործածութեան բացառութիւնը և Փարիզի ցուցահանդիսի մեդալները:

3—10 (Ե)

Թիֆլիսի իգական Գիմնազիայում ուսում ստացած մի ՕՐԻՈՐԴ, որ իր ուսումը աւարտել է Գալանեան օրիորդական դպրոցում, կամենում է մասնաւոր դասեր տալ Թիֆլիսի ընտանիքներում, պատրաստելով երկու սեռի երեխաներին մինչև Գիմնազիայի 3-րդը դասատուները

Հասցեն Թողնել «Մշակի» խմբագրատանը:

2—5

ՄԻ ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ

որ սովորել է Գալանեան օրիորդաց դպրոցում, ցանկանում է դասեր ունենալ տներում կամ ուսումնարաններում Հասցեն Թողնել «Մշակի» խմբագրատանը:

4—4

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր
ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆՑԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր
Ա. Ռ. Ա. Ռ. Օ Տ Ն Ե Ր Ը

ՐՈՒԴԿՈՎԱԿԻ—10—11 Ժ. ներքին, երկխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻԶԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 Ժ. կանանց և երկխայոց ց.
ԲԵՆԿԵՎԱԿԻ—11—12 Ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և առամների ց.
ՍՕՐՕՐԵՎ—11—12 Ժ. առամները ց.
Ա. ԳՈՒԴԿՈ—12—1 Ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 Ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 Ժ. ներքին և երկխայոց ց. ամէն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ
ՉԱԵՎԱԿԻ—5—7 Ժ. ջրային ց. և էլէկտրօ-տերապիա.
ՓՈՂԻՆԵԱՆ—6—7 Ժ. ներքին և երկխայոց ց.
Հիւանդանոցումն է մահ կա բարձր և չի Մ Օ Ղ Ե Ր:
ՎՃԱՐ—50 կո: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար համաձայնութեամբ: Մշտա-
տին անկողիններ. Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՈՎԱԿԻ

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 3/15 յունիսի ԲԱՐՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ LE TIGRE (Տիգր)
Նաւապետ FABRE (ՖԱԲՐ) մասնավոր Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա:
Աղէտները՝ ԲԱՐՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԵՆՇԷՐ, իսկ Թիֆլիսում ԳԵՐՈՐԴ ՀԵՋՈՒԹԵԱՆՑ:
ՀԵՋՈՒԹԵԱՆՑ: 2—3

ՊԱՐՍԱՍՏԱՆԻ ԹԵՂԱՆ ԲԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է մի ՎԱՐԺԱՊԵՏ, որը պէտք է աւանդէ հայոց լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն և ընդհանրութիւն: Պայմանները իմանալու համար դիմել «Մշակի» խմբագրատանը:

3—3

Дозволено цензурою, Тифлисъ 30 Мая 1888 г.